ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

2022 թվականի հուլիսի 10-ից 15-ը

Ռուսաստանի Դաշնություն (ք. Մոսկվա) գործուղման արդյունքների մասին

1. Անունը, ազգանունը՝

Լիլիթ Մովսիսյան, Միեր Մարտիրոսյան

2. Զբաղեցրած պաշտոնը՝

ՀՀ պետական եկամուտների կոմիտեի Վարչարարության մեթոդաբանության վարչության պետի տեղակալ

ՀՀ պետական եկամուտների կոմիտեի Մաքսային հսկողության վարչության պետի տեղակալ

3. Գործուղման վայրը և ժամկետները՝

Ռուսաստանի Դաշնություն, ք. Մոսկվա, ս.թ.հուլիսի 10-ից 15-ը

4. Հրավիրող կողմը՝

Եվրասիական տնտեսական հանձնաժողով

5. Գործուղման նպատակը (աշխատանքային ո՞ր խնդրի լուծման համար էր նախատեսված գործուղումը)՝

Եվրասիական տնտեսական միության մաքսային կարգավորման կատարելագործման հարցերով աշխատանքային խմբին կից փորձագիտական խմբի 42-րդ նիստի ընթացքում քննարկվել են ԵԱՏՄ մաքսային օրենսգրքում փոփոխություններ կատարելու մասին արձանագրության նախագիծը կազմելու համար շրջանառության մեջ դրված առաջարկությունները՝ թվով 172 հարց (կցվում է):

6. Քննարկված թեմաները՝

Եվրասիական տնտեսական միության մաքսային կարգավորման կատարելագործման հարցերով աշխատանքային խմբին կից փորձագիտական խմբի 42-րդ նիստի ընթացքում քննարկվել է ԵԱՏՄ մաքսային օրենսգրքի

փոփոխությունների և լրացումների մաս կազմող հարցերի առաջնահերթ հարցերի 1-ին փաթեթը, որը ներառում է՝ միջազգային փոխադրումներ իրականացնող տրանսպորտային միջոցների հայտարարագրմանը, մաքսային մարմինների միջև մշտական հիմունքներով փոխանակվող տեղեկատվության ծավալների ընդլայնմանը, մտավոր սեփականության օբյեկտների՝ մաքսային մարմինների կողմից հսկմանը, լիազորված տնտեսական օպերատորների պարզեցումների կիրառմանը, մաքսային փորձաքննության ժամանակ նմուշների և մնացորդների տնօրինմանը, անձի քննմանը, «ազատ պահեստ» մաքսային ընթացակարգի կիրառմանը, «մաքսային տարանցում» մաքսային ընթացակարգի ավարտի չեղարկմանը, նախնական տեղեկատվության ներկայացման սկզբունքներին և մի շարք այլ կարգավորումներին վերաբերվող հարցեր: Բոլոր հարցերի վերաբերյալ իրականացված աշխատանքների վերաբերյալ տեղեկատվությունը՝ այդ թվում նաև Հայաստանի Հանրապետության փորձագետների կողմից արտահայտած դիրքորոշումները ներկայացված են կից աղյուսակում:

7. Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը՝

Հանդիպումները տեղի են ունեցել ամեն օր ս.թ. հուլիսի 11-15: Բանակցություններին ներկայացված են եղել ԵԱՏՄ բոլոր պետությունների փորձագետները, ինչպես նաև ՌԴ, Ղազախստանի Հանրապետության և Բելառուսի Հանրապետության գործարար շրջանանակների ներկայացուցիչները՝ ըստ անհրաժեշտության:

Փորձագիտական խմբի հարթակում ներկայացվել են քննարկվող հարցերի վերաբերյալ ՀՀ փորձագետների պարզաբանումները, դիրքորոշումները (համաձայն կից ներկայացվող աղյուսակի):

8. Հանդիպման կամ հավաքի ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը՝

Փորձագիտական խմբի նիստի արդյունքներն ամփոփվել են արձանագրությամբ, որում ամփոփվել են քննարկվող հարցերի վերաբերյալ կողմերի մոտեցումները, դիրքորոշումները:

Կից ներկայացված աղյուսակում արտացոլված է ըստ գոյների առաջակվող դրույթների կարգավիճակը: Այսպես բանակցությունների արդյունքում "
համաձայնեցված են շուրջ 61 հարցեր,
քննարկումից հանվել են շուրջ 12 հարցեր,
տեղափոխվել են քննարկման հաջորդ փուլ 8 հացեր,
բարձրաստիճան պաշտոնյաների աշխատանքային խմբի նիստի քննարկման համար առանձնացվել են 6 հարցեր:

Փորձագիտական խմբի 42-րդ նիստի ավարտին ձեռք է բերվել նախնական պայմանավորվածություն՝ ԵԱՏՄ մաքսային օրենսգրքում կատարվելիք փոփոխությունների քննարկումը շարունակել օգոստոս ամսվա երկրորդ կեսում կայանալիք փորձագիտական խմբի հաջորդ նիստի ընթացքում

9. Առաջարկությունները, դրանց ընթացք տալու վերաբերյալ առաջարկները՝ եղանակը, ձևը, ժամկետները, պատասխանատուները, ակնկալվող արդյունքները՝

ԵԱՏՄ մաքսային օրենսգրքում փոփոխություններ կատարելու ուղղությամբ աշխատանքները շարունակվում են: Եվրասիական տնտեսական միության մաքսային կարգավորման կատարելագործման հարցերով աշխատանքային խմբին կից փորձագիտական խմբի՝ օգոստոս ամսին կայանալիք 43-րդ նիստի շրջանակներում անդամ երկրների փորձագետները կքննարկեն առաջարկությունների հաջորդ փաթեթը:

10. Ստորագրությունը, ամսաթիվը

19.07.2022թ